

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

Ե. ԹՈՐՈՍԵԱՆ

ՆԱԽԱԿ ԿԱՐՈՐ ՈՐ ԵՆ Ե ԳՐՈՒԹԻՒՆ

ՊԵՏԻ Ե ՈՒՂՂԱՆ ԿՈՒ


Խմբագր. ԱՐՇԱՆՈՅՍ ԼՐԱԳՐԻ

ԳԱԶԻԲԷ (Հասպոպահիէ)

Rédaction du journal arménien

ARCHAEOUCICE

HABGANIEM LE CAIRE (ÉGYPTÉ)



ԼՐԱԳՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔՍԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՒ ՆԱԽԱԿ

Տարեկան, ողջ դահլիճ. 60

Վեցամսեայ » 35

ՕՏԱՐ ԵՐԿԻՆԵՐ

Տարեկան Յրանք 20

Վեցամսեայ » 13

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՆԽԻԿ Ե

ԵՒ ԹՂԹԱՏԱՐԻ ԾԱԽԲԸ

Խմբագրութեան վրայ:

Խմբագրութեան ուղղուած գրութիւնք եւ չ'են տրուիր:

ՎԱՐՃԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՐՅԸ

Ամենուն կողմէ ալ դիտողութիւններ կ'ուղղուին մեզի, ըսելով թէ «Ինչո՞ւ չենք զբաղիր վարժարանի հարցովը, որ ամենէն շատ կարեւորութիւն ունեցող խնդիր մ'է»:

Մենք այդպէս ըսողներուն ժխտական պատասխան չենք տար և ընդհակառակը կ'ընդունինք թէ՛ արդարեւ պէտք է որ մեր ուշը գրաւող խնդիրներուն, ամենէն առաջին տեղը գրաւէ վարժարանական հարցը. սակայն պէտք է գիտնալ միանգամայն թէ՛ երբ լրագրութիւնը օրինաւոր դիտողութիւն մը կ'ընէ ազգային ո՛րեւէ հաստատութեան մէջ գործուած զեղծումներուն դէմ, ժողովուրդն ալ պէտք չէ՛ որ անտարբեր կերպով սպասէ, որպէսզի գործերը իր և լրագրութեան ուղած ձեռքով վերջ մը գտնեն:

Լրագրութիւնը շատ զբաղումներ ունի, շատ մը պարտականութիւններ ամէն կողմէ զինք կը կոչեն. ուստի իր դիտողութիւնները կ'ընէ ու կ'անցնի, ուրիշ անգամներ ալ նոյնը ընելու պարտականութիւնը իր յուշատետրին մէջ արձանագրելով: Ժողովուրդն է, ծնողքներն են, որ պէտք է շարժին և չընհայեացութեամբ իրենց գործը բուն իսկ իրենց ձեռքով կարգադրելու ջանքեր ընեն և միջոցներ ստեղծեն:

Այսպէս ուրեմն «Արշալոյս»ը մեզազրել ուզողներուն, մենք կը ներկայացնենք մեր ամենէն առաջին թիւը, ուր անաչառ թղթակից մը իրաւամբ ՚ի վեր կը հանէր Գայտեան վարժարանի կարգ ու սարքին թերութիւններն, յուր մատակարարութիւնը, հոն յաճախող աշակերտաց խիստ յետադէմ վիճակը, ինչպէս նաև վարժարանի չէնքին անյարմարութիւններն:

Հիմակ կարգը կուգայ հարցնել մեզի դիտողութիւն ընողներուն թէ՛ այս ամենը կարգալէ և նոյն իսկ մեր հրատարակած յօդուածին պարունակութիւններն ստուգութեանց վրայ հիմնուած լինելը հաստատել վերջ, իրենք ի՞նչ ըրին:

Վերադառնանք ուրեմն վարժարանի խնդրոյն և ըսենք թէ՛ արդարեւ վարժարանը շատ յետադէմ վիճակ մը ունի, արդարեւ վարժարանի հոգաբարձութեան միակ անգամը ամեն ինչ իւր քմահաճոյքին զոհած է. թերևս ուրիշ շատ մը

լաւ ձիրքերով օժտուած անձ մը ըլլայ այն, բայց հայ ազգային վարժարանի մը ղէկը և հոգաբարձութիւնը վարելու հասկացողութենէն զուրկ է. թէ արդարեւ՝ ազգային վարժութիւնը, որոյ վերին հսկողութեան տակ գրուած է վարժարանը, մէկ անձի խաբէր համար ազգային մանկուոյն ժամանակը և ազգին դրամներն ի զուր կը վատնէ և խիղճ չ'ընենք: Մեզքը իրենց վիզը:

Այս ամէնը աղէկ. բայց լրագրութիւնը պէտք եղածներն ժողովուրդին ծանուցանել զատ, ուրիշ միջոց մը ունի՞ այդ բարեկարգութիւններն մտցնելու համար այնպիսի շրջանակի մէջ, որուն բոլոր համուզումը եղած է թէ պէտք է խեղդել այն ձայները, որոնք ճշմարտութիւնը կը խօսին:

Մեր խօսքը վերջացնելէ առաջ յիշատակենք Եգիպտոսի Առաջնորդի մը վարժարանի մասին յայտնած կարծիքը, որ ինչպէս վստահ ենք՝ մեր ընթերցողներուն ո՛չ միայն անորձեռի չ'պիտի թուի, այլ և այդ համուզումը ունեցող առաջնորդն ալ ուղղամիտ մէկը չ'պիտի նկատուի:

Գէորգ Ծ. Վ. Իւթիւճեան (այժմ Եպիսկոպոս) օր մը, ըստ իր սովորութեան entre nous ըսելէ վերջ. իր հետեւեալ համոզումը և առաջադրութիւնը մեզ կիմացնէր.

«Այստեղ եկող առաջնորդ մը, և թէ կուզէ իր պաշտօնին վրայ մնալ, պէտք չէ որ վարժարանի գործերուն միջամտէ. և արդէն իզմիլլիան Սրբազան ալ, այստեղի Առաջնորդ ընտրուած օրերս ինձի այդ խորհուրդը տուած է»:

Ահա Առաջնորդ մը, որուն յանձնուած էր հայ ժողովուրդի մը և ամբողջ հայ գաղթականութեան մը ճակատագիրը ինչպէս նաև հայ մանկուոյն կրթութեան որբանին պէտք եղած կերպով սատարելու հողը ու այսպէս կը խօսէր, ա՛լ ի՞նչ կ'սպասէք, հայ ժողովուրդ, վարժարանական հարցը դո՛ւք էք միայն որ իրաւունք ունիք և կարող էք վճռելու և լուծելու:

Լրագրութիւնը իր պարտքը պիտի կատարէ միշտ խղճի մտօք, ասոր մի՛ տարակուսիք. դուք ալ ձեր պարտքը պէտք է որ կատարէք առանց ուրիշ մեղադրելու:

1800—1900

(Շար. նախորդ թիւէն ևս վերջ)

1823ին, պարսիկները յանկարծակի յարձակելով Ռուսաց վրայ, Անգլո-կովկասեան հայաբնակ քաղաքները աւարի տուին: Հայերը զինուելով՝ թշնամեոյն զօրաբանակին յառաջխաղացութիւնը խափանեցին մինչև Ռուս խումբերուն հասնելը, որոնք ասպատակները ջախջախեցին: Պատերազմը վերջացաւ. Պարսկական Հայաստանի մէկ մասին Ռուսիոյ միացումովը՝ էջմիածինն ալ մէկտեղ առնելով:

Սակայն Ռուսները հակառակ իրենց խոստման, իրենց պաշտպանութեան տակ՝ նոր միացած մասին մէջ քաղաքական ինքնավարութիւն մը չ'ընտրեցին հայերուն, ինչպէս վերջին արեւելեան պատերազմին վերջացած ատեն չ'ընտրեցին Թրքական Հայաստանի վարչական ինքնավարութիւնը:

1836ին, Սուլթան Մահմուտ Բ. ջնջեց Եհնի-չիքիներու բանակը, որ Օսմանեան կայսրութեան և հպատակ ժողովրդեան զլլուուն փորձանք մը եղած էր և բոլոր բարենորոգմանց ու նորածաւութիւններուն արգելք կ'ըլլար:

1829ին, Ռուսները Թրքական Հայաստանի մէջ Ախալցիք պաշարեցին. քաղաքին քրիստոնէայ և թուրք իսլամները ասպատակողներուն դէմ ամբողջ ամիս մը մարտնչեցան թէև, բայց վերջապէս Ռուսները քաղաքին տիրեցին և վրիժառութեան համար 25,000 քրիստոնէայիներ կոտորեցին: Զօրապետ Պասքեվիչ Բաբերգի վրայ ընակիչները՝ սուրբով և նիզակներով զինուած, եօթն անգամ թշնամին ետ մղեցին, բաւական թուով կոտորած տալով. Բաբերգի պատերազմիկները դարանի մը մէջ բռնուելով՝ վերջապէս յաղթուեցան, պատերազմին դաշտը թողլով 400 քիւրտերու և 156 հայերու զիակներ: Պասքեվիչ քաղաքին հերսերը կը մտնէ և հոն՝ մեծ թուով հայեր և թուրքեր մորթել կուտայ: Բաբերգի ստուքը Ռուսաց համար 4,000է աւելի պատերազմիկներու, 1,500 քիւրտերու և 1,011 հայերու կեանքը արժեց:

Այսպէս էր Բաբերգի հայերուն հաւատարմութիւնը, որոնք վերջերս իրենց տաճիկ հայրենակիցներէն մորթուեցան:

Հակառակ այս ուղղամտութեան և զիւցազնական արարքին, հակառակ այս տարապայման զոհողութեանց, սարի մը վերջ հայերը կովկասէն վերադարձող Ռուս զօրաբանակին հետեւեցան, ազատելու համար իրենց մահմետական տէրերուն սաստիկ մոլեռանդութենէն՝ որոնք քրիստոնէայ իշխանութենէ մը ջախջախուած ըլլալուն համար սրտմտած էին: Այս պատերազմէն առաջ, միայն կարնոյ մէջ 10,000 հայ ընտանիք կը համրուէր. և անկէ վերջ հազիւ քանի մը հարիւրներ մնացին. ապահովութեան պակասութիւնը երկիրը անապատի կը վերածէր:

1830ին, հայերը երկրորդական ուսմանց համար Իւսկիւտարի մէջ տղայոց գիշերօթիկ վարժարան մը հիմնեցին ձեմարան անունով, այս ձեռնարկը սկզբնաւորութիւն մը եղաւ, և քիչ վերջը Ոսկեղջիւրի վրայ կառուցուեցաւ Նուպար-

Շահագործան վարժարանը: Երեսն Աշտարակեցիք իւր կողմէ թիֆլիզի մէջ ցերեկեայ վարժարան մը հաստատեց միևնույն նպատակաւ: Խաչիկ Լազարէֆ Մօսկուաի մէջ Լազարեան վարժարանը հիմնեց արեւելեան կենդանի լեզուաց համար: Այս բոլոր հիմնարկութիւնները արդէն կեցածներուն հետ, մեծ զարկ մը տուին հայ ժողովրդեան իմացական մակարդակը բարձրացնելու, թէ՛ մայր հայրենիքի եւ թէ՛ գաղթականութեան մէջ: 1839ին, Սուլթան Ապտուլ-Մէճիտ Կիւլ-Նանէի հրովարտակը հանեց, նման 15 տարի վերջ հրատարակուած քանգիւնարին, որ արգարութիւն եւ հաւասարութիւն կը խոստանար — առանց խորութեան սերունդի եւ կրօնքի — տէրութեան բոլոր հպատակներուն:

Գեղեցիկ երազներ, որոնք սակայն չ'արդիւնեցին թուրքերը իրենց քրիստոնեայ հայրենակիցները ջարդելու եւ մնացին արձամարտանքով եւ աստիճանաբար լեցուած գլխաւոր դասակարգ մը՝ դէպ ի միւս բոլոր մնացած հայերը: 1841ին, Կ. Պօլսոյ մէջ 3,000 հայեր, դժգոհ իրենց պատրիարքէն եւ սեղանաւորներէն, որոնք ըստ կամս կը վարէին հանրային գործերը, Արաս-թին Գործոց նախարարութեան առջեւ աղմուկեց-ցոյց մը բերին. նախարարը՝ Րիֆաթ Փաշա, չ'ութեցաւ եւ խոստացաւ ցուցարարներուն փափաքը իրագործել: Պատրիարքը եւ Ամիրաները պաշտօնակեցին եւ հակառակ ցուցարարներու պետե-րուն բանտարկութեան եւ քրտորանաց, հայ հան-րութիւնը իրեն առաջին յաղթանակը տարաւ սակաւապետութեան (oligarchie) վրայ, որ Պատրիարքարանի մէջ կ'իշխէր փաշաներու պաշտ-պանութեամբը:

1843ին, Յովակիմ անունով Սամաթիացի հայ երիտասարդ մը, որ մահմետականութիւնը ընդու-նած էր, հայ եկեղեցւոյ ծոցը կը վերադառնայ եւ այս արարքին համար կը գլխատուի Օսմանեան կառավարութեան հրամաւաւ: Դեռ պանները կը բողոքէին եւ մարտիրոսացած հայուն արկունք, ժամանակի մը համար թրքաց կրօնական մոր-նանդութիւնը զինակալի ընկու կը ծառայէ: Բայց վերջին ջարդերու ժամանակ հազարաւոր հայերու բնաւարակը կ'ապացուցանէ թէ՛ թուրքոյ մէջ խղճի ազատութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ բառ մը: 1846ին, Կ. Պօլսոյ Մատթէոս Պատրիարքը բողոքականութեան դիմող հայերուն դէմ նզովք կը հանէ եւ աւելի վերջերք, Սարգիս Պատրիարք եւ իր ժողովուրդը կ'ընդդիմանան, որ Էտիքնէ-Գա-րուի հայոց գերեզմանատան մէջ չ'թաղուի Կա-րապետ Միրիքեյամ բողոքական ազգայինը. հա-կառակ պատերազմական նախարար Րիզա փաշայի սպանակիքներուն եւ ոստիկանութեան նախարար Մէնսէտ փաշային, որ բազմաթիւ խուճերու գլուխն անցած հոն դիմեց: Հոս կանգ կ'առնէ սակայն հայերու կրօնական աններող ոգին եւ այսօր եղ-բայրաբար կ'ապրին իրենց Բողոքական, Կաթոլիկ, եւ Օրթոքսոքս ազգակիցներուն հետ:

Ճիշդ 1846ին էր, որ Մատթէոս Պատրիարք Հայաստան անունով Պատրիարքարանի պաշտօնա-կան օրաթերթը հիմնեց որ յետոյ Մասիս կոչուե-ցաւ: Այն ատենէն ի վեր թուրքիս եւ այլուր հրատարակուած հայ թերթերու եւ հանդէսներու շնորհիւ, պարբերական մամուլն ալ դարձցին հետ մնացած, հայ ժողովուրդին մէջ առողջ գաղա-փարներու ծաւալումը, խղճի, իրաւանց եւ ազգա-յին զգացմանց գլխաւորութիւնը ներշնչեցին:

1847ին, Կ. Պօլսոյ հայոց պատրիարքը, պար-տաւորեցաւ ընդունիլ 14 կրօնական եւ 20 քաղա-քական անդամներէ բաղկացած երկու ժողովներու գործակցութիւնը. ասոնք հայ երեւելիներէն ընտ-րուած եւ Դոնէն վաւերացած էին: Այս նոր յաղ-թանակը, որ հայ ժողովրդեան լուսամիտ մասին կողմէ տարուած էր, Պատրիարքին սանձարձակ գործելուն արդէնք մ'էր:

1847 ին էր, որ Սուլթանը Օսման փաշայի հրամանատարութեամբ զօրաբանակ մը զրկեց, Պէտրիսան պէյի եւ Խան Մահմուտի բարբարոս քրեւոր ցեղերուն ապստամբութիւնը դապիւր հա-մար, ասոնք անպատիւ կը հարստահարէին թուր-քահայաստանի ժողովուրդը եւ կ'ապանէին իրենց քմահաճոյից չ'համակերպողները: Մատթէոս պատ-րիարքը էրզրումի, Վանի, Պիթիւզի, Տիարպէքիի

եւ Բալուի հայերը հրախրեց, որպէսզի օժանդա-կեն Օսմանեան զօրաբանակին:

Վանի հայերը Խան Մահմուտը ձերբակալեցին եւ Օսման փաշայի յանձնեցին: Քաղութեամբ պա-շարեցին ճեզիրէի լեռնուտ երկիրը, ուր Պէտրիսան պէյ ապստամած էր եւ ստիպեցին զայն անձնա-տուր ըլլալ թուրք հրամանատարին:

Ապստամբ Քիւրտիսթանը հայոց ուղղամիտ ձեռնառուութեամբ նորէն դրուեցաւ տաճկական լուծին տակ:

Արդի Սուլթանը հակառակ քաղաքականու-թիւն մը սկսաւ քրեւորել հայերուն դէմ զինելով, ասոր համար է որ Հայաստանը աւերակ զգած է եւ Քիւրտիսթանը անիշխանութեան մասնուած:

1860 ին հայերը յաջողեցան Դոնէն ստանալ ժողովրդեան գործոց վերաբերեալ կազմական կա-նխադրութիւն մը. ասիկա հիմնուած էր հանրու-թեան ձայնին վրայ, հանրապարական ուղով ներ-շնչուած եւ արեւմտեան խորհրդարանականու-թեան վրայ ձեռնուած:

Միապետը որ այսօր նըլքեղին կը տիրէ, ջնջեց հայոց Սահմանադրութիւնը, օսմանեան սահմանա-դրութիւնն ալ ջնջելէ յետոյ. կա ավարական այս կրկնակի հարուածներով էր, որ քանդեց ազատու-թեան եւ յառաջդիմութեան համար եղած ամբողջ Դարի մը ջանքերու պտուղը եւ իւր հայ ու թուրք հպատակները նորէն կամայականութեան ճիւղա-նկերուն մատնեց:

Դարը որ սկսած էր եեմիչիլիական վարչու-թեան տակ, վերջացաւ համիթիներու դրութեամբ:

L'Arménie
Թարգմ. ՊԷԱԳՐԻՍ

ԵՆՈՐՈՍԱԿԱՆ ԹՂԹԱՐԵՐ

ԱՆԳՂԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Հարաւ-Ափրիկէի մէջ գտնուող եւրո-պական հիւպատոսներու, իրենց կառավա-րութեան հետ հեռագրական յարաբերու-թիւնն զրեթէ անկարելի է, քանի որ այդ հեռագրիչներն ստիպուած են անգղիական քննութիւնէ անցնել, բոլոր հեռագրատանց եւ փոստատանց պաշտօնեայինն անգղիա-ցիներ լինելով:

Կը մնայ ուրեմն նամակագրութիւնն, որով միայն, հիւպատոսներն իրենց սեփական կառավարութեանց հետ կրնան հաղորդակցիլ: Արդ՝ մեզ ըւր կուգայ թէ՛ այդ միջոցն ալ գործնական լինելէ գաղբած է, վասն զի անգղիացիք գաղա-նիքը կը բռնաբարեն. մեզ կը հաւատեն թէ՛ Հրուանդանէն եւ Լորէնցօ-Մարքէզէն մեկնող նամակներով լեցուն գիւտնադի-տական սնուակներ կը բացուին, անոնց մէջ եղածներն խնամքով կը քննուին եւ ի պա-հանջել հարկին, անգղիական գործակա-տարնն ին զայնս պրպտած ժամանակինն աննպատ գրութիւններն կ'անհետացնեն:

Բացուած նամակներն եւ կոտրուած մոմէ կնիքներն սքանչելի կերպով կեղծուած են: Արդեօք անգղիական կառավարու-թիւնը այս զեղծումին պատասխանատուու-թիւնը իւր վրայ կ'առնէ:

ՏՕԳԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԻՃԵԱՆ

Վերջին օրերս Բարիզի հայ գաղութն նոր բժիշկ մ'ալ ունեցաւ յանձին Պ. Յա-րութիւն Միճեանի որ իւր տօքթօթութեան րեզն անցուց զեկտ. 15 ին: Մեր հայրենա-կիցը իրեն թէյին նիւթ ընտրած էր ականջի հիւանդութեան մէկ տեսակը (maladie de mienne) զոր յաղութեամբ պաշտպանեց՝ Բրօֆ. Փօթէն, Տէժըրին, Տէկրի եւ Մէրի ուսուցչապետներէ կազմեալ քննիչ յանձ-նակալին առջև եւ արժանացաւ շահ գոն

(Bien satisfait) նօթին: Նիշ մը՝ որուն ոչ միայն շատ քիչ հայեր, այլ նաև շատ քիչ ֆրան-սալիներ ալ կարժանանան:

Մենք ուրախ ենք եւ տեսակ մը պար-ծանք կ'զգանք մեր երիտասարդ հայրե-նակցին յաջողութեան վրայ:

Տօքթ. Յարութիւն Միճեանի յաջողու-թիւնը մեր աչքին աւելի գնահատելի է այնու՝ զի նա Բարիզ իւր ուսմանքն կա-տարած է նիւթական աննպատա պայման-ներու մէջ, այսինքն ստիպուած էր մէկ կողմէն իւր ուսանողական ծախքն եւ կեանքը շահիլ — թէպէտ իւր մեծ եղբայրն Տէօք. Յակոբ միճեան իրեն փոքր գումար մը կը յատկացնէր, բայց այն անբաւական էր — գեղազործի մը քով ծառայելով եւ միւս կողմանէ իւր բժշկական ուսումն առաջ տանիլ:

Շնորհաւորութիւն ուրեմն մեր երի-տասարդ նոր բժշկին եւ յաջողութիւն իւր ապագային:

ԳՈՐԾԱՊՈՒԸ ԿԵ ԾԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Քաղաքիս մէջ գտնուող սիկարայի գոր-ծարանատէրերուն միտքերը զբաղեցնող ամենէն կարեւոր խնդիրն է սիկարաճի աշ-խատանքաց գործադուրը, որ բաւական ատենէ ի վեր կը շարունակուի:

Գործարանատէրերէն ամանք՝ իրենց եղած ապսպրանքներուն մասամբ գոհացում տալ կարենալու համար, գործաւորաց ըն-կերութեան — որոյ անդամներն թիւը մեծ 1200 ի կը հասնի — չ'պատկանող սի-կարաճիներ գաղտնի կաշխատանքն եղեր եւ այս՝ անցեալ օրեր պատճառ կը լինի մի-ջազէպի մը, որոյ մասին հաւաստի աղբիւրէ մը հետեւեալ տեղեկութիւններն կը քաղեմ:

Անցեալ օր, 4—300 հօգիէ բաղկացեալ գործաւորներու խումբ մը, Մաթոսեան ըն-կերութեան գործարանին շուրջ կը պատեն, գաղտնի հոն աշխատող գործաւորներն հա-մուզելու կամ պահանջելու համար որ դադրին աշխատելէ:

Մաթոսեան ընկերութիւնը հեռաձայ-նով կառավարական պաշտօնեաներ կը հրաւիրէ, որոնք գալով կը յորդորեն հոն հաւաքուած բաղմութիւնը, որպէս զի մեկ-նին անտի: Կառավարական պաշտօնեայ մը գործարանին մէջ աշխատողներն ալ կը ճամբէ եւ խնդիրը կը փակուի:

Գործաւորաց թիւը հետզհետէ ստուա-րանալով 800 — 1000 ի կը հասնի մինչև Գիւնաղիի գործարանին գուռը, ուր նոյնպէս Փօրթ Մայիտէն բնութեամբ գործաւորներ գաղտնի կաշխատին շուրջ: Այս տեղ ո՛ր է միջազէպ տեղի չ'ունենար:

Մաթոսեան ընկերութեան գործարա-նին մասերը այդ օրեր գործաւորներու ոմանց մէջ կուլու մը տեղի կուենայ եւ երկու հողի թեթեւ կերպով կը վերաւորուին:

Գործաւորաց ընկերութիւնը իրեն ան-գամակից կարօտ եւ ընտանիքի տէր եղող անդամներուն նիւթապէս օգնելու համար վիճակահանութեան տոմսեր հրապարակ հանած է իւրաքանչիւրը 5 զրշ. ողջ գնով եւ կը յուսացուի թէ բաւական կարեւոր արդիւնք մը ձեռք պիտի բերուի:

ՆՇԱՆԱՍՈՒԹԻՒՆ

Բերկրութեամբ սրտի կը լսենք թէ, քաղաքիս մէջ երկար տարիներէ հետէ հաս- տատեալ բարեհաճաւ վաճառական Բար- թիկ էֆէնտի նահապետեանի գուստր՝ Օր. Էօթէնի նահապետեանի նշանախօսութիւնը կատարուած է ի Պոլսու, հանրածանօթ վա- ճառական Յովհաննէս էֆ. Ալալմճեանի հետ, որ Պոլսոյ հրատարակին վրայ իրա- ւամբ կը վայելէ մեծ անուն մը, ինչպէս նաև Ազգ. շրջանակներու մէջ ալ կարևոր դիրք մը:

Իսկ ազնիւ Օրիորդին համեստութիւնը վերաւորած չըլլալու համար, հազիւ կը համարձակինք միայն յիշել ընտանեկան շրջանակներու մէջ իւր վայելած համբաւը՝ մտաւորական զարգացման և բարոյական բարեմասնութեանց տեսակէտով, և՛ սոյն ներդաշնակ լծորդութեան աւթիւ մեր խնդակցութիւնը կը յայտնենք:

ՄԵՐ ՊԱՏ. ԸՆԿԵՐՈՋ ՇՐՈՒՄԱՐՈՒՄԸ

«Արշալոյս»ի յարգելի արտօնատէր, ընկեր և աշխատակից Տիար Տօքթ. Ա. Ս. Յակոբեան, որ վեց ամիսներէ հետէ թերթիս գոյութեան, պահ- պանման և օգտակարութեան համար այնչափ մեծ հոգածութիւն և խնամք ունէր, վերջերս ամենակարևոր և անհրաժեշտ պարծի մը պատճա- րաւ 25 Յունուար 1900 թուական պաշտօնադրով մը մեզ կը ծանուցանէ թէ՛ ստիպուած է շրջա- րիւ իւր Արտօնատէր, ընկեր և աշխատակից մեզ ըրած աջակցութենէն, որուն շատ պէտքը ունէինք և յորմէ զրկուած ըլլալին հարկ է խոստովանիլ թէ՛ մեծ վիշտ և ցաւ պիտի պատճառէ մնացեալ ընկերացս:

Տիար Տօքթ. Ա. Ս. Յակոբեանի ունեցած պատճառներուն շատ մօտէն տեղեակ և ընդու- նելով որ անոր առ իւր ազգի և աշխարհի ու- նեցած անձնութիւնը անբաղդաանլի է, կու- գանք հրապարակաւ ծանուցանել մեր յարգելի ընթերցողաց թէ՛ մեր սիրելի և համակրելի ըն- կերոջ օգտակար աջակցութիւններէն զրկուելու հարկին տակ կը գտնուինք զժողովրդար և զայս ի գիտութիւն մեր Պատ. ընթերցողաց կանխաւ ծանուցանել պարտականութիւն կը համարինք:

Տիար Տօքթ. Ա. Ս. Յակոբեան թէ և, հարկի պա- հանջմանց առջեւ կը բաժնուի մեզմէ, սակայն խոս- տացած է և մեր միջոցաւ կ'ապահովուի իւր բոլոր համակիրներն թէ ինք որչափ որ ալ հեռի գտնուի մեզմէ, սակայն իւր սրտով պիտի հետեւի խմբադրու- թեանս և թէ իւր անունն շնորհակալիքը կը յայտնէ «Արշալոյս»ի բոլոր համակրողաց, որոց նիւթական և բարոյակաւ աջակցութեան շնոր- հիւ «Արշալոյս»ը ցարգ կ'ապրի և պիտի ապրի:

Հ Ա Ռ Ա Չ Ա Ն Ք

Կեանքի հրաժեշտ տուաւ տարին, Անյիւրջն վիշն անյատակ յաւէտ իրեն գերեզման, Յաւերս սակայն անաւոր, վշտերս անթիւ, անաս- ինծի հրաժեշտ դեռ չ'ստուին:

Յոյսի փոքրիկ կայծ մը՝ այստեղ, Հալած, մաշած կուրծքիս տակ, մոխրած սրտիս մէջ Սիրտանքի օրերու արշալոյսի մը պայծառ Ծագումին վիշ ու փառայեղ՝ Իս սպասցոց, ու անձկաւ կ'սպասցնէ տակաւին, Մինչ ինձ անա տարիներ սեւ կուգան, սեւ կ'ան- հետին:

Կը տեսնեմ շուրջս հրճուանք ու պար, Երգի ձայնիւ կը լսեմ, ուրախութեան աղաղակ, Ծաւի սակաւ մոտացում, պահ մը զգալու փոխանակ, Կ'ուժամթափի հողիս իսպառ:

Կը մթաքնին աչքերըս, կարծես պիտի նուաղիմ... Իս ընաւին չ'խղճար, ճակատագիրս սխրիմ:

Ատեն մ'ես ալ այնտեղ, հետուն, Ծովէն անդին, հայրենի երկրի տակ մտայլամած, Կեանքի այս ցուրտ աշունին՝ ջերմ համարքով զի- կը հրճուէի ժամեր համբուն, ինովցած, Սրտիս շատ մօտ սիրազեղ հոգեակներո: գրկին մէջ, Զ'էի դադրիւր երգելէ, կուրծք ս սիրով կ'ելէ էջ:

Ձուրկ այժմ անոնց գգուանքներէն, Կարօտ անոնց մէկ ձայնին, մէկ ժպտին իս ամոքող, Իմ էութեանս ամբողջ վրայ ձգած սուգի քող, Հոս կը հատնիմ արտասուելէն, Ու բոլորտիքս պարող այս խաղն ու խինդն օտարին Իս կը հեզնեն ու վիճակս ծանրացնելու կը աքնին:

Ն'իս, գէթ լուր մը ունենաի, Լուր մ'այն հոգեոյս սեւ հագած հատններէն ա- նուշիի, Անշուշտ եմ որ անոնք ալ իս կը խորհին հոն այժմին, Ինձմով իրենց շուրջն ամայի, Բռնաւորին սրին տակ, վերադարձիս անհամբեր, Իմ կարօտս կը քաշեն բաղդովս եղած ալեկեր:

Շունչի բովերս այս չ'իջած, Ո'ւր էր թէ ես վերստին հոն, անոնց քով լինէի, Գրկերուն մէջ գտնէր սիրտս իր բերկրանքներն Օրորուէր՝ հեշտ օրորով ցած, Երբեմնի, Ըլլար անոնց սրտերուն միսթարող կարեկից, Երբոր անոնք արեւած բարախէին թախտալից:

Կեանքի հրաժեշտ տուաւ տարին, Ու թողուեցաւ անցելոյ: անգուցիւն մէջ անյատակ, Յաւերս սակայն ու վշտերս աղէտներու յիշատակ, Ինծի հրաժեշտ դեռ չ'ստուին, Բարդուած հոս, ներսի դիս, ա'լ աւելի բորբոքուն, Արցունքի նոր հեղեղներ հասիլ կուտան ինձ թագուն: 1 Յունուար 1900 ՀՄԱՅՍԱԿ ՇՄԹՐԵԱՆ

ԱՍԳԹՈՒԹԵԱՆ ՑԱՆԱԼԻ ՕՐԻՆԱԿ ՄԸ
Լսե՛ք աշխարհ, ծանի՛ր մարդկութիւն, թէ էն- չե՛ր կը լինին գթութեան, մարդասիրութեան ին- ակող հոստատութեանց երբեմն մութ անկիւն- ներուն մէջ:

Յարսաքուստ պայծառ ու փառաշէն, Փրկչի անուամբը մկրտեալ, հիւանդանոցի բարձրագիր

չէնրին մոռցուած խցիկին մէջ է խեղճ ուսուցիչը — Դաւիթ էֆէնտի Սարգիսեան — անկեալ, յուսա- հատ և վշտաբեկ:

Եւ մինչ ատատաձևնութեան բարերար կա- մեղողութիւնը որ ուժանակի զօրաւոր զգրգումով մը սարսեց սրտերը, զգացումները ու պահ մը դժ- բաղդ իր ընտանիքին արտասուաց հեղեղը մեղմա- ցուց, ազդին և պարտաճանաչութեան հակապատ- կերին տակ, զոր կը թողու գիտութեան մարդը հիւանդանոցի մեծ վիրաբոյժը Խօքթ. Չարդարեան աւելի ևս կ'ընկճէ աղիւս: մարդը — հիւանդանոցին մտացեալը, — որ իր սրտին ու հոգեոյն նստարովը կը կշռէ գէպ ի յինքն գործուած զրկումի և արհա- մարհանաց անողւք միժուրիւնը ու կ'սկսի պըր- պտել, խառնել իր անցեալ յիշատակները և բար- ձրացնել իր դանակակիծ պաղատանքը գէպ ի իր մեծ Փրկիչը ըսելով:

«Տա՛ր գիս, տա՛ր Աստուած իմ, ժխորէ աղ- մուկէ հեռի լուսութեան աւայտութեան կղզեակին մէջ... հոն՝ ուր սոխակի գեղեցիկ ատաւօտուն չ'պիտի զարթուցանէ գիս, հոն՝ ուր կարգն ու սարքը բնութեան անմահ սրանչելիք մը չէ այլ ևս, հոն՝ ուր գեղեցիկ անունն ու սիրտը ոչ ևս է, տա՛ր գիս Աստուած իմ տա՛ր հոն, գիտունին թէ սպէտին, հարուստին թէ աղքատին վերջին հանգրուանը, որոյ մտից դռնէն ներս յաւիտենա- կան դատաւճճոի մը երկիւղին տակ խոնարհած կան մարդկային ստուերներու անհամար գլուխ- ներն:

«Երթա՛մ, երթա՛մ, խաղաղ այդ լուսութեանը մէջ գտնել և սիրանալ իմ բաժնին՝ ուր այլևս չ'պիտի մուտ գործէ հոգեոյն վէրքը և սրտի հա- ռաշանքը:

«Բայց մի գայք անգամ մը ևս բանալու Ձեր յիշատակի երբեմն մոռանալ չ'ըրբը, Գուք օրեր, սի- բուն բոպէներ, այդ յիշատակաց սրբարանին մէջ ևս իջայ բղիտող աղբիւր մը, ցամքած պապական մարդկութեանը շրթունքին արեւի ոսկեգոյն ճա- ռագայթներն իմ կուրծքին վրայ և լուսնի շող- շողուն երեսը իմ սրտին մէջ:

«Ի՞նչ յիշատակաց պահարանին մէջ ես ունե- ցայ իմ գարունը, իմ վարդն ու վարդաստանը, խանդն ու ետանդը, օրն ու ասպարէզը՝ որոց լու- լորի թողած կենդանի զմայլումին մէջ դեռ սեր- տել կը կարծեմ խնամոցս ապաստանած մատաղ սերնդեան հոգեկան կրթութեան մեծ ու բարձր գործը:

«Ա՛հ, այդ գործը իմ բռնս էր, իմ գաբնանս, իմ պարտիզիս ծաղիկն էր:

«Ո՛ւր էր ծաղիկներս փթթուն ու սիրուն ծա- ղիկներս, եկէ՛ք, եկէ՛ք, տեսէ՛ք մարդկութեան ծա- ռաստանին անկեալ, Լքեա՛լ Ձեր մշակը, զոր եր- բեմն այնքան կը սիրէիք կը պաշտէիք:

«Եկէ՛ք, անգամ մը ևս տեսնեմ, համբուրեմ Ձեզ ու յետին մնաք բարեաւս բնիւով երթամ, երթա՛մ լուսութեան և անշուշտ ամայութեան ցուրտ անկիւնանոցին մէջ:

«Սակայն դուք հետեւեցէ՛ք Ձեր վարպետի շաղին, իմ վարպետի վարպետին՝ գիտութեան արգար պահանջումներուն: Սիրեցէ՛ք բառնայ և կտրատել այն վտուշերն ու տատաղը, որոց սուր ծայրերը շատ անգամ դուք կը տեսնէիք թէ կը ծակկեն անմեղ մարդկութեան փափուկ, շատ փափուկ սիրտը:

ԼԱ ՄԻՉՈՒՄԱԼ ԼԱՅՅ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ, ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՄՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻՒ ՄԻԼԻԱՐ 437 ՄԻԼԻՈՆ


Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահա- բաժինները: Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԻԱՐ 480 ՄԻԼԻՈՆ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընկերութենէ մէկ միլիար աւելի է: Ս. ԼԷՈՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ:

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւն- ներ և հրաշարակի վրայ աւելի ասպահովագրութիւններ ունի և աւելի ասպահովագրին կը գանձէ: Ս.ԼԷՔՍՏՈՒ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործ. Ս.Ազգ. քահանայար. Գրիգոր:

Վ. Ա. ԱՍՏՆՈՒՆ ԹԵՅԻ

Գ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՆԿ

ՇՈՐԻ-ԱՊՏԻԻԼ-ԱԶԻԶ



«Դուք տեսաք թէ ես հետեւեցայ մարդկութեան օգտակար դառնալու առանձնաշնորհումի չափ սակաւաթիւ անձանց ընտրած չաղին. վաստակեցայ, յոգնեցայ գէթ պատուելու վարպետը եւ թուժեր կանգնելու վաղահաս ապականութեան մը աւերիչ ծաւալումին հանդէպ որուն մէջ ձեռք բերած յաջողութեանս յեանեալ կաթիլ մը թոյնը, ա՛հ, կուգայ բառնալ զեռ երիտասարդ կեանքիս մնացորդ օրերը :

«Սակայն մի լքանէք, դուք շարունակեցէք ու վատահայեք կամքի ոյժին . . . Ահա տեսէք, այս գթութեան յարկի տակ ինձմէ աւելի բաղդաւում վիճակակիցներ, որք ճիգով մը հապճեպով մը 'ի մի ումայ կը կլլեն իրենց երկնցուած գաւաթի պարունակութիւնը. բայց իմը, իմ գեղն ու դարմանը՝ որուն վրայ կրնայի յուսալ թէ գուցէ վայրկեան մը եւս բաց թողու աչքերս, ինքը գիտութեան մարդը, արժանի համարած չէ զիս :

«Իցէ թէ ինձմէ վերջը հանդիպողներ իւր արժանաւոր միտքարութիւնը վայելէին, առանց ինձ պէս հեռիէն նայելու :»

Սակայն ահա ինքը մեծ տօքթորը, կանչուած անկեալ մարդկութեանը օգտակարութեան համար կը փորձէ, կը քննէ ամենուն վիճակը, որոց բոլորի կուրծքին տակ պահուած կան հին ու նոր, սիրոյ ու նախանձու վշտի կամ քաղցրութեան բորբոքած վէրքեր . . . Ես անոնց բոլորին դժբաղդապօյնը կը կանչեմ, կ'աղաղակեմ, կ'աղբերսմ իրեն, սակայն ինքը չուզեր, չ'կամիր լսել իմ ձայնը ոչ թերեւս փոքրիկ կարեւորութիւն մը ունեցած ըլլայ, եթէ ոչ ընկերութեան գէթ իմ վշտարեան ընտանեաց . . . :

Այո՛, այո՛, ազնիւ մարդ, գիտութեան հասուցած ձեռնհաս առաքելը. մի նայիր, մի տեսներ զիս ու ձգէ որ մա՛հ, մա՛հ խոտաղող իմ սաւանիս տակ ընկեմ հոգեպէս. մի փորձեր մերձեանալ իմ հոգւոյն ու սրտին ինքնաբերութեամբ այտուցին զօր արդէն լքու մի եւ արհամարհանացք անողք 'ըջտարակով ա՛հ, ծակեցիր յորմէ դուրս պոռթկացող զանութիւնը պիտի հասնի մինչեւ անաչառ մարդկութեանը հոն ի հանդէս դալու յուսացուած գթութեանը կամ արժանաւոր մարդասիրութեանը տեղ, քո զազիր ու գարշելի անպարտաճանաչութիւնը Ազգային յարկին մէջ. եւ իցի՛ւ թէ նոյն լուծը կամ նոյն պարտականութիւնը զօր տուած է Ձեզ, ինձմէ յետոյ աւելի բարւոյն եւ օգտակարին չը ինայելու փոխն ունենանայիք միշտ :

Բայց ա՛լ հերիք է. ակուր մտածումներս ու վշտաթիթ երեւոյթներս թող չ'խոտովն հոգեկան բաղձանացս զեռ ուրիշ հատորները :

Այդ հատորներու մէջ իմ սիրտը հալած մաչած է եւ իմ հոգին 'ի սպառ տկարացած :

Պէտք է երթամ, պէտք է անպարեմ. տա՛ր զիս Աստուած իմ, հո՛ն է իմ կանխահաս փորձութիւնս. միայն թէ անգամ մը, գէթ անգամ մը եւս զաւա՛կս, փոքրիկ զաւակս :

25/12/99

ԱՍՏՂԻԿ

ԱՏՍՄՆԱԲՈՅԺ

Տոկոսն եւ մարգարտաշար ակուններ ու առողջ լինտեր ունենալն ոչ միայն մարդուս գեղեցկութեան կը նպաստէ, այլ առողջ կարենալ ապրելու առաջին պայմանն է : Տիրար Պետրոս Նիկողեմոս, վկայեալ ատամնաբոյժ, որ երկար ատեն Բարիզու մէջ ատամնաբուժութեամբ զբաղած եւ արհեստին նորանոր կատարելութեանց խիստ մօտէն հետեւած է, այժմ քաղաքս վերադարձած եւ էղպէքիյէ անհասէզ վաճառատան ճիշտ գիմացի աքաղաղմանին մէջ ատամնաբուժական աշխատանոց մը հաստատած է, ուր ամեն օր պատրաստ է իրեն զիմնդներն գոհացնել թէ արհեստին յաջողակութեան եւ թէ գնեւրու յոյժ չափաւորութեան տեսակէտով :

Հինգշաբթի օրերն կէս օրէ վերջ ժամը 3էն 5 ձրի գարմանում :

Թէյի գործածութեան ընդհանրանալով, թէյի ճաշակն եւ նրբացած է. որով թէյի առևտուրն վաճառականութենէ աւելի արուեստ մըն է ուր միայն երկարատեւ եւ ճոխ առևտուրէ յառաջ եկած փորձառութեամբ կ'ստացուի :

Մեր տունն, որ արդէն հանրածանօթ է իր քսանամեայ գոյութեամբ եւ ընդարձակ գործառնութեամբ, այս տարի եւս իր մասնաւոր գործակալաց ձեռամբ գնած է բազմազան եւ մեծաքանակ ընտիր թէյեր Չինաստանի, ճՍՎԱՅԻ, ՍԷՅԱՆԻ եւ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ գիւտարարներէն, որոցմէ արդէն հասած է մեզ. ինչպէս նաև ձըմեռուան եղանակի յարմար թէյեր, որոնք իրենց գերնախի հոտաւետութեամբ ամեն ճաշակի յարմար ըլլալով հանգեբձ, գնեւրու ՉՍՓԱՉԱՆՅ աժանութեամբ ալ ամեն քսակի դիւրամատչելի են :

Թէյ Կ. Պօլտոյ եւ գաւառաց, եւ թէ օտար երկիրներու մէջ մեր տան ցոյց տրուած վատահոլութիւնն կը քաջալերէ մեզ, առաւել եւս յարիլ մեր սկզբունքին, որ է՝

Ուղղամտութիւն թէյերու սեսակի, կօխի եւ գնց մտքին :

Մեծաքանակ թէյ փոքրաքանակ մեղի եղած կ'ԱՆԻԻԿ գրամով յանձնարարութիւնք փութով կը կատարուին :

11—50

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԲԱԹ 26 ՅՈՒՆՎԱՐ 1900

Ա. Թիւ	7018	չահած է	Ֆրանք	1000
Բ. "	9172	"	"	200
Գ. "	2562	"	"	100
Դ. "	4113	"	"	50
Ե. "	2930	"	"	50

Հետեւեալը 25 ական ֆրանք կը շահին

2461	5918	2530	8951	954	1668
542	4482	5868	5084	405	8532
4162	7372	6825	9923	3995	2564
1856	3763	2233	9021		

ԾԱՆՕԹ. — Այն շահող թիւերը որոց վիճակեալ պարգևներն ութը օրէն չեն գանձուիր, ընկերութեան անտուկին սեփականութիւնը կը լինին :

Տպագրութիւն Ս. Ա. ԴԱՐԹԻՆԵԱՆ

ԼԵՒՈՆ ԿԻՄՄԻՇԵԱՆ

Վ. Ա. ԱՍՏՆՈՒՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՅԵՐՈՒ

ՓՕՆՕԿՐԱՑ

Գ. Ա. ՀԻՐԷ, — Մուսի փողոց, — Գ. Ա. ՀԻՐԷ

Ս. եւ Ս. Սեհնավիի վաճառատան դիմաց

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ կը գտնուի պատի եւ քօնսօլի ընտիր տեսակէ բանտիւններու մեծ մթերք :

ԴԻՄԵՑԷՔ ՀՈՆ եւ պիտի գտնէք ամէն ճաշակի յարմար զանազան տեսակ արանց եւ կանանց ժամացոյցներ, աղամուրագաւոր, ոսկի, արծաթ եւ Երիւ :

Ձրանաական եւ ամերիկեան ապրանց ամենարժանի տեսակներէն զարդեղէններ, օլրաներ, օլիւ, մասանիներ եւ այլն :

Ամէն տեսակ ժամացոյցներու նորոգութիւն կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն ծանօթ ժամագործի մը միջոցաւ :

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ԶԱՓԱԻՈՐ

49—50

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Ամենափափուկ ստամբս ունեցողներուն համար :

Մի՛ ուտէք երբէք այն հացերէն, որոնք զուրկ են փորձառու եւ վարպետ հացագործի մը միջոցաւ պատրաստուած ըլլալու առաւելութիւններէն :

Երբ մեր ամեն օրուան կերած հացերը լաւ եփուած տեսակէն չեն, դժուարամարտութիւն կը պատճառեն եւ հետեւաբար շատ մը հիւանդութեանց ենթակայ կընեն զմեզ :

Այս հիւանդութիւններէն եւ հետեւաբար բժշկաց յաճախ այցելութիւններէն ազատ մնալու միակ միջոցն է՝ դիմել

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՓՈՒՈՐ

Օռօգի Պափ վաճառատան մօտեր, Կամե-էլ-Պեկաթի Երես դիմացը

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ. բազմաթիւ նորանոր յաճախորդներէ գտած ընդունելութիւններէն քաջալերուած, պատիւ ունին յայտարարելու թէ՛ իրենց փուռին մէջ պատրաստուած ընտիր հացերը զուտ եւ անխարդախ ալիւրէ պիտի ըլլան միշտ :

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ. թեան փուռին մէջ գաղղիական, անգղիական, գերմանական եւ յունական հացեր պիտի պատրաստուին, իրենց տեսակին մէջ անմիջիկ ըլլալու պայմանաւ :

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ. ամենամեծ խնամքով պիտի պատրաստեն սուրճի, թէյի եւ կաթի պարսիմաթներ եւ այլն :

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ. թեան եղած յանձնարարութիւնը ամենայն ճշդութեամբ եւ փութով կը կատարուին :

24—50